

ՁԵՌԱԳՐԱԿԱՆ**«ԿՏԱԿ ՀԱՐՀԱՐԱՆԱԳ»-Ի ԺԱՆՐԻ ՁԵՌԱԳՐԱԿԱՆ ԵՒ
ԲՆԱԳՐԱՅԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ¹**

Նուիրում է Գէորգ Բամպուքճեանի (1923-1996 թթ.) ծննդեան 100-ամեակին

Ներածություն

«Կտակ չարչարանաց» կամ Աւագ ուրբաթին նուիրուած այլ անուանումներով յայտնի քարոզները հետաքրքրական են տարբեր տեսանկիւններից՝ տեսական-աստուածաբանական, գործնական-կիրառական, լեզուի ու բառապաշարի եւ այլն: «Կտակ չարչարանաց»-ի հեղինակային խմբագրութիւններից կամ տարբերակներից երկուսին նուիրուած առանձին հրապարակումներից² զատ անհրաժեշտ համարեցինք ընդհանրացուած կերպով անդրադառնալ նաեւ ժանրին, մասնաւորապէս՝ նրա ձեռագրական եւ բնագրային առանձնայատկութիւններին, քանի որ թեմայի՝ մեր կողմից շարունակուող հետազոտութիւնն այս պահին որոշակի՝ աւելի ընդհանուր եզրայանգումների յանգելու հնարաւորութիւն տալիս է: Ինչպէս յաջորդիւ կը տեսնենք, «ձեռագրական եւ բնագրային առանձնայատկութիւններ»-ի տակ նկատի ենք ունեցել ինչպէս այս ժանրի նմոյշների՝ ձեռագրական արտայայտման, գրչագրերում դրանց ընդօրինակման առնչուող տարբեր հանգամանքներ, այնպէս էլ ձեռագրագիտութեանն ու բնագրագիտութեանը վերաբերող այլ առանձնայատկութիւններ: Արուած դիտարկումներն ու եզրայանգումները կարող են նաեւ գործնական օգտակարութիւն ունենալ այս ժանրի նմոյշ-քարոզների նկարագրութեան, բնագրերի կազմման եւ ուսումնասիրութեան համատեքստում եւ ըստ այդմ՝ հետաքրքրել տարբեր մասնագէտների, մասնաւորապէս՝ ձեռագրագէտներին:

«Կտակ չարչարանաց»-ի ժանրը

Նկատենք նաեւ, որ «ժանր» եզրը որոշակի պայմանականութեամբ է գործածուում մեր կողմից. նախ, ըստ էութեան, նրա բոլոր միաւոր-նմոյշների դէպքում խօսքը քարոզների մասին է: Բացի այդ, «ժանր» եզրը կիրառուում ենք ոչ թէ Աւետարաններում նկարագրուած աւագուրբաթեայ իրադարձութիւններին նուիրուած բոլոր քարոզների դէպքում, այլ որոշակի կառուցուածքով ու սիւժէով ստեղծուած միաւոր-քարոզների համար, որոնք կարելի է զետեղել որոշակի ժամանակային սահմանների շրջանակում: Աւելի կոնկրէտ՝ խօսքը Ժէ-ԺԹ. դարերում կազմուած-խմբագրուած «Կտակ չարչարանաց»-ի տարբերակների մասին է, որոնց յատուկ են որոշակի «ժանրային» առանձնայատկութիւններ: Այս առումով պէտք է շեշտել, որ զուտ բարոյաբանական բնոյթի համանուն քարոզները (օր.՝ Յակոբ Սրճեցունը (Սարուգեցի) կամ Զաքարիա Ա. Զագեցի հայրապետինը եւ այլն) չունեն խնդրոյ առարկայ ժանրի երկերին բնորոշ կառու-

¹ Սոյն յօդուածի նախնական տարբերակն իբրեւ զեկուցում ներկայացուել է Մաշտոցեան Մատենադարանի «Ներիտասարդական 8-րդ գիտաժողով»-ում՝ նուիրուած պատմաբան, ձեռագրագէտ Արտաշէս Մաթետեանի ծննդեան 100-ամեակին, «Կտակ չարչարանաց»-ի ժանրի ձեռագրական առանձնայատկութիւնները» խորագրով (Երեւան, 1-3 Դեկտ., 2022 թ.):

² Դրանք յիշատակուած են յընթացս յօդուածի շարադրանքի:

ցուածքային, սիւժէտային եւ այլ յատկանիշները, որոնց անդրադարձ կը կատարուի յաջորդիւ: Ժանրի մէջ որոշակի վերապահումով է պէտք ներառել նաեւ ամենայն հաւանականութեամբ նրա յետագայ նմոշների համար որպէս նախօրինակ ծառայած, Ս. Գրիգոր Տաթեւացու Քարոզգրքի Ձմեռան հատորում տեղ գտած եւ իր իսկ բնորոշմամբ «յայլմէ» (այսինքն՝ ուրիշի կողմից) գրուած 129-րդ (ՃԻԹ.) միաւոր-քարոզը, քանի որ նրա եւ աւելի ուշ շրջանի օրինակների միջեւ առկայ են որոշակի տարբերութիւններ՝ սկսած բնագրերի ծաւալից ու ոճից³: Ըստ այդմ, «Ժանր» ասելով՝ նկատի ունենք որոշակի կառուցուածքով, անգամ կարելի է ասել՝ կաղապարով ստեղծուած աւագուրբաթեայ քարոզների շարքը, որոնք յատկապէս մեծ թուով ստեղծուել եւ ընդօրինակուել են սկսած Ժէ. դարի երկրորդ կէսից, բայց առաւելապէս՝ ԺԸ-ԺԹ. դարերում, այդ թւում՝ հայատառ թուրքերէն⁴: Ամփոփելով ընդհանուր տեղեկութիւնները Ժանրի մասին՝ կարելի է յիշատակել նաեւ մի քանի հեղինակների, որոնք կազմել-խմբագրել են «Կտակ շարչարանաց»-ի իրենց տարբերակը կամ որոնց վերագրուել է նման քարոզ-երկ.

1. Երեմիա [Սարկաւագ/Դպիր] Չելէպի Քէօմիւրճեան/Բիւզանդացի (1637–1695 թթ.),
2. Ալեքսանտր Ա. Ջուղայեցի Կաթողիկոս (Ժէ. դ. – 1714 թ.),
3. Ղազար Ա. Ջահեցի Կաթողիկոս (Ժէ. դ. – 1751 թթ.),
4. Գէորգ Վարդապետ Միւլայիմ (1681–1758 թթ.),
5. Յակոբ Պատրիարք Նալեան (1706–1764 թթ.),
6. Սիմէոն Ա. Երեւանցի Կաթողիկոս (1710–1780 թթ.),
7. Աբրահամ Արքեպիսկոպոս Աստապատեցի (ԺԸ. դ.),
8. Պետրոս Արքեպիսկոպոս Բերդումեան/Նախիջեւանցի (1720-ականներ-1787 թ.),
9. Գաբրիէլ Վարդապետ Թիֆլիզեցի (ԺԸ. դ.),
10. Պօղոս Քահանայ Կաղզուանցի (ԺԸ. դ.)⁵,
11. Ստեփանոս Սարկաւագ Տփղիսեցի/Թիֆլիզեցի (ԺԸ-ԺԹ. դդ.),
12. եւ այլք⁶:

ՍԻՍԺՆ

Յիսուս Քրիստոսի Ս. Յարութեան (Ջատկի) տօնին նախորդող Աւագ ուրբաթ (իրականում՝ հինգշաբթի երեկոյեան) օրն ընթերցուելու (եւ երգուելու) համար նախատեսւած այս «Կտակ»-ները կամ «Աւագ (Մեծ) ուրբաթի քարոզ»-ները յատկապէս Ժէ. դարակէսից յետոյ աչքի են ընկնում հեղինակային տարբերակների առաջացմամբ եւ մեծ թուով ընդօրինակութիւններով:

Կարծում ենք՝ աւելորդ չէ հակիրճ կերպով անդրադառնալ այս Ժանրի քարոզների սիւժէին, որը, բացառութեամբ վաղ շրջանի մի քանի տարբերակների, ունի արձակ եւ չափածոյ կառուցուածք: Աւագ ուրբաթի իրադարձութիւններին⁷ նուիրուած այս քարոզը հիմնականում սկսւում է բարոյախրատական բնոյթի նախաբանով, մեկնողա-

³ Այդ մասին տե՛ս Գ. Ա. Յարութեան, «Կտակ շարչարանաց»-ի կամ Աւագ ուրբաթի քարոզի՝ Սիմէոն Ա. Երեւանցի կաթողիկոսի խմբագրութիւնը, Բանբեր Մատենադարանի, 33, Երեւան, 2022, էջ 140:

⁴ «Կտակ շարչարանաց»-ի այլ առանձնատպութիւնների մասին տե՛ս նաեւ նոյն տեղում, էջ 141:

⁵ Առաւել յայտնի է որպէս հեղինակ «Յուպ Բահանայից» երկի (տպ.՝ Կ. Պոլիս, 1792 թ.):

⁶ Այս ցանկը վերջնական չէ եւ ապագայում հնարատու է հեղինակային նոր տարբերակների բացայայտում եւս:

⁷ «Կտակ շարչարանաց» քարոզները սկսւում են հիմնականում Գեթսեմանի պարտէզում տեղի ունեցող իրա-

կան բնույթի սկզբնամասով, ապա կենդանի լեզուով եւ յուզականութեամբ վերաշարադրուում են Յիսուս Քրիստոսի կեանքի՝ Գեթսեմանիի այգում մատնութիւնից մինչեւ Գողգոթայում խաչելութեան մանրամասները՝ որոշակի շեշտադրումներով, հեղինակ-պատմողի ընդմիջարկութիւններով, մեկնութիւն-մեկնաբանութիւններով, երբեմն՝ արտաաւետարանական նիւթերով յաւելումներով: Խմբագրութիւնները տարբերուում են նաեւ նկարագրուող իրադարձութիւնների գործող անձանց ընտրութեամբ եւ նրանց գործողութիւնների շեշտադրումներով: Ընդհանուր առմամբ, կարելի է արձանագրել, որ ուշմիջնադարեան հայ հեղինակների կողմից քարոզի բովանդակային բաժանումներ կամ ցանկեր հազուադէպ են հանդիպում:

Ստորեւ ներկայացնում ենք Սիմէոն Ա. Երեւանցի հայրապետի խմբագրած «Կտակ շարչարանաց»-ի տարբերակի բովանդակութիւնը, որը պայմանականօրէն բաժանել ենք հետեւեալ մասերի (հեղինակի ինքնագիր օրինակում որեւէ բաժանում առկայ չէ).

❖ Նախաբան,

❖ Յովհաննէս Աւետարանչի անունից պատումը՝ միահիսուած հեղինակի տարբեր մէջբերումների, յաւելումների, ընդմիջարկութիւնների հետ, որը շարունակուում է հեղինակի անունից. [Գեթսեմանիի] պարտէզից մինչեւ Գողգոթայ ավետարանական պատումի վերապատումը,

- Գիշերը [Գեթսեմանիի] պարտէզում, Յիսուսի ձերբակալումը,

- հարցաքննութիւնը ֆահանայապետի տանը,

- հարցաքննութիւնը Պիղատոսի տանը, գանահարումը, տանջանքները,

- Գողգոթայ տարուելը,

❖ Մարիամ Աստուածածնի անտեղեակութիւնը, լուրն իմանալուց յետոյ ապրումները եւ խօսքերը,

❖ Տիրամօր դեգերումները, Որդու փնտրումը, խօսակցութիւնը «Մարիամանց» հետ,

❖ Մարիամի եւ Յիսուսի երկխօսութիւնը (հիմնականում՝ չափածոյ),

❖ Յիսուսի խաչելութիւնը եւ մահը,

❖ Մարիամի ողբը,

❖ Ամփոփում (դէպքերի հակիրճ թուարկում),

❖ Վերջաբան (խրատական բնոյթի)⁸:

Այժմ անդրադառնանք ժանրի նմոյշների ձեռագրական եւ բնագրային հիմնական առանձնայատկութիւններին՝ ներկայացնելով դրանք խմբաւորուած կերպով եւ դասակարգուած՝ ըստ կէտերի, թէեւ այդպիսի բաժանումը ինչ-որ իմաստով պայմանական է, քանի որ երբեմն նոյն առանձնայատկութիւնը կարելի է զետեղել միաժամանակ երկու կէտերի ներքոյ:

դարձութիւններով (երբեմն՝ Մաղկազարդի մասին յիշատակումով ու դրա հակադրումով ասագուրբաբեայ դէպքերին) եւ հասնում մինչեւ Յիսուս Քրիստոսի խաչելութիւնը՝ Գողգոթայում: Հայոց եկեղեցու ճաշոց ծիսամատենի Ասագ ուրբաթի կանոնում (որը ներառում է նաեւ «Կտակ շարչարանաց»-ի մի խմբագրութիւն), ի թիւս ընթերցուածների, ընդգրկուած են ավետարանական հետեւեալ հատուածները. Յովն. ԺԳ. 16-ԺԸ. 1, Դուկ. ԻԲ. 1-65, Մարկ. ԺԳ. 27-72, Մատթ. ԻԶ. 31-56, Մատթ. ԻԶ. 57-75, Յովն. ԺԸ. 2-27, Յովն. ԺԸ. 28-ԺԹ. 16, Մատթ. ԻԷ. 1-56, Մարկ. ԺԵ. 1-41, Դուկ. ԻԲ. 66-ԻԳ. 49, Յովն. ԺԹ. 17-37, Մատթ. ԻԷ. 57-61. տե՛ս ճաշոց գիրք Հայաստանեայց եկեղեցւոյ, երկրորդ տպագրութիւն, Վաղարշապատ, 1872, էջ 214-247:

⁸ Գ. Ա. Յարութիւնեան, «Կտակ շարչարանաց»-ի կամ Ասագ ուրբաթի փառոցի՝ Սիմէոն Ա. Երեւանցի կաթողիկոսի խմբագրութիւնը, էջ 143-144:

Ձեռագրական առանձնայատկություններ

ա. Ինչ ձեռագրերում են ընդօրինակուել/պահպանուել «Կտակ»-ները:

«Կտակ չարչարանաց» միաւոր-քարոզներ հանդիպում ենք ամենատարբեր բնույթի գրչագրերում: Ըստ ընդօրինակութիւնների յաճախութեան դասակարգման դէպքում կը ստացուի թերեւս հետեւեալ պատկերը.

- Քարոզգրքեր՝ ինչպէս հեղինակային, այնպէս էլ՝ «հաւաքածոյ»-քարոզգրքեր,
- «Ճաշոց» ծիսամատեան⁹,
- Ամենատարբեր բովանդակութեան «Ժողովածոյ»-ներ, այդ թւում՝ միայն «Կտակ»-ներից կազմուած ժողովածոներ,
- Ընդօրինակուել են նաեւ որպէս առանձին միաւոր-ձեռագիր,
- Տարբեր ձեռագրերում հանդիպում են որպէս յաւելագրութիւն (աւելացուած ձեռագրի բուն գրչութիւնից որոշ ժամանակ յետոյ):

Արդէն նշուեց Ս. Գրիգոր Տաթեւացու Քարոզգրքի մասին, որում տեղ է գտել Աւագ ուրբաթի քարոզը՝ 129-րդ համարի ներքոյ: Այս «Կտակ»-ները ոչ միայն մաս են կազմել տարբեր (հիմնականում հեղինակային) քարոզգրքերի՝ ընկալուելով որպէս զուտ Աւագ ուրբաթի քարոզ, այլեւ յաճախ առանձնացել են դրանցից եւ ընդօրինակուել տարբեր ձեռագրերում՝ կա՛մ առանձին (երբեմն հանդիպում են ձեռագրեր, որ բովանդակում են միայն «Կտակ չարչարանաց»-ի՝ առանձին հեղինակների խմբագրած բնագրեր), կա՛մ էլ հիմնականում ժողովածոների մէջ՝ դառնալով առանձին ձեռագրական միաւոր: Այս իմաստով յետագայում եւս ամենայաճախն այս ժանրի նմոշները գտնուում ենք հեղինակային քարոզգրքերում կամ հաւաքածոյ-քարոզգրքերում: Սակայն, եթէ թուարկելու լինենք ձեռագրերի տեսակներն ըստ բովանդակութեան, պէտք է արձանագրել, որ «Կտակ»-ներ ընդօրինակուել են ամենատարբեր տիպի ձեռագրերում՝ սկսած մեկնողական (այդ թւում՝ փիլիսոփայական մեկնութիւններ) կամ տոմարագիտական գործեր ամփոփող գրչագրերից մինչեւ դաւանաբանական, մասնաւորապէս՝ հակաճառական ուղղութեամբ ունեցողներ:

բ. Մէկ ձեռագրում (հիմնականում ժողովածոներում) կարող է ընդօրինակուած լինել այս ժանրի մէկից աւելի նմոշ-քարոզ:

Ձեռագրական առանձնայատկութիւններից է նաեւ մէկ գրչագրում, անգամ ոչ քարոզգիրք-ժողովածոներում, մէկից աւելի «Կտակ»-ի ընդօրինակութիւնը: Այսպէս, օրինակ, ՄՄ Հ^ժ 2820 ձեռագրում (Ժողովածոյ, ԺԸ. դ.), որտեղ հաւաքուած են զանազան քարոզներ, տեղ է գտել նաեւ աւագուրբաթեայ երկու քարոզ: Առաջինը դրուած է Ալեքսանտր Ա. Զուղայեցի Կաթողիկոսի «Կտակ»-ի մի խմբագրութիւնը (84ա-91բ), որին անմիջապէս յաջորդում է Յակոբ Պատրիարք Նալեանին վերագրուող¹⁰ մէկ այլ «Կտակ»

⁹ Թէ երբ է այս փառոզը «մտել» ճաշոց, դեռեւս յստակօրէն չենք կարող մատնանշել. սակայն 1686 թ. Վենետիկում տպագրուած ճաշոցում այն արդեն առկայ է:

¹⁰ Ի հարկէ, բացառելի չէ, որ սա հէնց Յակոբ Պատրիարք Նալեանի խմբագրածն է, սակայն նրան վերագրուել են «Կտակ չարչարանաց»-ի մի շարք տարբերակներ. դրանց հետիմակային պատկանելութեան հարցը դեռեւս սպասում է վերջնական պատասխանների եւ այդ ուղղութեամբ մեր հետազոտութիւնն ընթացի մէջ է: Նշենք, որ Ի. դարի որոշ հետազոտողներ՝ ինչպէս Գեորգ Բամպոմբեսանը, Շուշանիկ Նազարեանը, ծանօթ են եղել եւ անդրադարձել են Յակոբ Պատրիարքի «Կտակ չարչարանաց» գործին. տե՛ս օր. Գ. Բամպոմբեսան, Յակոբ Պատրիարք Նալեան (1706-1764), Ծննդեան 275-ամեակին առթիւ, Էջմիածին, 1981, Ը. (Օգոստոս), էջ 37, նոյնի՝ Յակոբ Պատրիարք Նալեան (1706-1764). Կեանքը, գործերը եւ աշակերտները, Ստանպոլ, 1981, էջ 43, Ը. Լ. Նազարեան, Յակոբ Նալեանը եւ նրա չափաբերականը, ՊԲՀ, 1984, հմր. 1, էջ 80-94:

(92ա-105)¹¹;

Մէկ այլ օրինակ են ՄՄ Հ^{մր} 1103 եւ 1390 գրչագրերում պահպանուած Ալեքսանտր Վրդ. Զուղայեցու՝ «Կտակ շարձարանաց»-ի միաժամանակ երկու խմբագրութիւնները. ա. Ամբակումի մարգարէութիւնից քաղուած բնագրով, գրուած ամենայն հաւանականութեամբ 1681 թ.)¹², բ. առնուազն 1686 թ. ստեղծուած մէկ այլ խմբագրութիւն, որը վերագրուել է նաեւ Դազար Ա. Զահկեցուն¹³: Ընդ որում, այս երկու գրչագրերում «Կտակ»-ները զետեղուած են յաջորդաբար, ժամանակագրական հակառակ հերթակա-նութեամբ¹⁴:

Հաշուի առնելով «Կտակ»-ների ոչ մեծ ծաւալը (միջինում 15 թերթ), ինչպէս նաեւ զանազան ձեռագրացուցակներում հայերէն գրչագրերի նկարագրութիւնների պատկերն այս պահին, դրանց սկզբունքների տարբերութիւնները, առանձնայատկութիւնները եւ որոշ այլ հանգամանքներ՝ կարելի է վստահօրէն պնդել, որ այս միաւոր-քարոզ-ների թիւը վստահաբար կը փոփոխուի՝ որոշակի աճի միտումով:

գ. Ժամրի տարբեր մոյջներ, այսինքն՝ տարբեր խմբագիր-հեղինակների «Կտակ»-ներ, տարբեր չափով են ընդօրինակուել եւ տարբեր չափի տարածում ստացել:

«Կտակ շարձարանաց»-ի որոշ նմոյշներ, բացի տուեալ հեղինակ-խմբագրի քա-րոզգրքից, ընդօրինակուել են նաեւ այլ ձեռագրերում՝ ե՛ւ իբրեւ առանձին ձեռագիր-միաւոր, ե՛ւ տարբեր ժողովածոներում, ինչպէս, օրինակ, Յակոբ Պատրիարք Նալեանի հեղինակած տարբերակ(ներ)ը:

Մինչդեռ, օրինակ, գրեթէ նոյն շրջանում ստեղծուած մէկ այլ աւագուրբաթեայ քա-րոզ՝ Սիմէոն Ա. Երեւանցի կաթողիկոսի հեղինակած տարբերակը, հանդիպում է հէնց իր քարոզգրքում եւ այլ ժողովածոներում հազուադէպ է ընդգրկուել (օր.՝ ՄՄ Հ^{մր} 3476, 65ա-87ա): Երկի միակ առանձին ընդօրինակութիւնը, որը յայտնի է այս պահին, Վիեն-նայի Մխիթարեան Միաբանութեան մատենադարանի թիւ 1833 ձեռագիրն է՝ 12 թերթ, գրիչն անյայտ, ԺԸ. դարի վերջ¹⁵: Իսկ Ստեփանոս Սարկաւազ Տփղիսեցու կամ Թիֆլիզեցու «Կտակ շարձարանաց»-ի խմբագրութիւնը մեզ հասել է բացառապէս որպէս առան-ձին գրչագիր արուած ընդօրինակութիւններով՝ այս պահին յայտնի ընդամէնը երկու ձեռագրով (ՄՄ Հ^{մրբ} 8676 եւ 9346)¹⁶:

Վերոբերեալ օրինակներից կարելի է եզրակացնել, որ բոլոր «Կտակ»-ները չէ, որ ստացել են նոյնչափ տարածում: Ըստ այդմ, ենթադրելի է, որ որոշակի խմբագրութիւն-ներ աւելի մեծ ժողովրդականութիւն են վայելել, քան միւսները: Այս համատեքստում պէտք է նաեւ ի մտի ունենալ այն, որ առնուազն ԺԷ. դարի երկրորդ կէսին Ճաշոց ծի-

¹¹ ՄՄ 2820, 84ա-105ա, նկարագրութիւնը՝ տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենա-դարանի, հտ. Թ., խմբ.՝ Գ. Տէր-Վարդանանի, Երեւան, 2017, էջ 786:

¹² Տե՛ս Հ. Ս. Անասեան, Հայկական մատենագիտութիւն, Ե-ԺԸ. դդ., հտ. Ա, Երեւան, 1959, էջ 584-585:

¹³ Այս խմբագրութեանն առաջիկայում մանրամասն կ'անդադառնանք առանձին հրապարակմամբ:

¹⁴ Ձեռագրերի նկարագրութիւնը տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Դ., կազմ.՝ Ա. Քէօզլէրեան, Կ. Սուքիասեան, Յ. Քէօսէեան, խմբ.՝ Փ. Անթաթեանի, Յ. Քէօսէեանի, Ա. Ղա-զարոսեանի, Տ. Շահէ-Քիւնյ, Հայրապետեանի, ցանկերը կազմ.՝ Վ. Դեռիկեանը, Երեւան, 2008, էջ 319, 1142:

¹⁵ Ցուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանին ի Վիեննա, հտ. Գ., կազմեց՝ Հ. Օգոստինոս Վրդ. Սեբուկեան, Վիեննա, 1983, էջ 528-529:

¹⁶ Տե՛ս Գ. Յարութիւնեան, Ստեփանոս Սարկաւազ Տփղիսեցու (Թիֆլիզեցու) «Կտակ սուրբ շարձարանացն Քրիստոսի փրկչին մեռոյ» երկը եւ «Կտակ շարձարանաց...»-ի ժամը, Ակադեմիկոս Սէն Արեւշատեանի ծննդեան 90-ամեակին նուիրուած հայագիտական միջազգային գիտաժողովի նիւթեր (22-23 Մայիս, 2019 թ.), Երեւան, 2020, էջ 223-224:

սամատեանում արդէն իսկ տեղ էր գտել Աւագ ուրբաթի քարոզի մի տարբերակ, որը, բնականաբար, աւելի պաշտօնական ընկալում պիտի ունենար: Թէեւ, միւս կողմից, դրա առկայութիւնը չի խոչընդոտել, որ նշեալ դարերում տարբեր հեղինակներ ստեղծեն իրենց խմբագրութիւնները:

դ. Ժանրի մոյշ-քարոզները, թէեւ ստեղծուել են ուշ միջնադարում կամ վաղ արդի շրջանում, դրանց ինքնագրերը հիմնականում մեզ չեն հասել:

Սրա հետ կապուած է եւս մէկ հանգամանք. նոյն տարբերակի ընդօրինակութիւնները, ինչպէս ցոյց է տալիս մեր հետազօտութիւնը, կարող են ունենալ որոշակի տարբերութիւններ՝ արդէն սկսուածքից կամ խորագրից սկսած: Գրիչները թերեւս իրենց ազատ են զգացել՝ բառացի չհետեւելու ընդօրինակող բնագրին: Ի հարկէ, ինքնագրերի առկայութիւնը (ինչպէս, օրինակ, Սիմէոն Ա. Նրեւանցի հայրապետի խմբագրութեան պարագայում) դիւրին է դարձնում նաեւ այս քարոզների բնագրերի կազմման ու հրատարակման գործը:

ե. Յաճախ այս ժանրի մոյշ-քարոզներն ընդօրինակուել են կամ առանց հեղինակի անուան յիշատակման, կամ էլ սկզբում/վերջում նշում է, որ երկն անանուն է:

Յատկանշական օրինակ է Ալեքսանտր Ա. Զուղայեցի եւ Ղազար Ա. Զահեցի հայրապետներին վերագրուած «Կտակ շարշարանաց»-ի մի տարբերակի պարագան. Մաշտոցեան Մատենադարանում պահուող եւ մինչ այս պահը յայտնի 13 ընդօրինակութիւններից միայն մէկի խորագրում է տեղ գտել հեղինակի անունը, այն էլ՝ Ղազար Զահեցուն¹⁷. մինչդեռ իրականում հեղինակը Ալեքսանտր Զուղայեցին է:

Վերոնշեալ ձեռագրական առանձնայատկութիւններով պայմանաւորուած՝ առկայ են օբյեկտիւ բարդութիւններ, երբ գործ ենք ունենում ոչ միայն այս ժանրի, այլեւ, թերեւս, ուշմիջնադարեան նմանատիպ ժանրերի միաւորների նկարագրութեան կամ բնագրերի կազմման եւ առհասարակ՝ ուսումնասիրութեան հետ:

Բնագրային առանձնայատկութիւններ

ա. «Կտակ»-ների ժանրի մոյշների գերակշիռ մեծամասնութեան՝ արձակ եւ չափածոյ կառուցուածքով պայմանաւորուած, դրանց առանձին (չափածոյ) մասերը /ողբեր, տաղեր/ ընդօրինակուել են այլ ձեռագրերում եւս:

Արդէն նշեցինք, որ ի տարբերութիւն «տաթեւացիական» տարբերակի եւ Ժէ. դարի վաղ խմբագրութիւնների՝ յետագայում ստեղծուած «Կտակ»-ների տարբերակներում այս քարոզն ունի արձակ եւ չափածոյ՝ խառը կառուցուածք: Չափածոյով շարադրուել են հիմնականում երկխօսութիւնները՝ Մարիամ Աստուածածնի եւ Յիսուս Քրիստոսի, Աստուածածնի եւ Յովհաննէս Աւետարանչի միջեւ, ինչպէս նաեւ մենախօսութիւնները: Այսպիսի կառուցուածքի հետ է կապուած նաեւ մէկ այլ առանձնայատկութիւն. քարոզի չափածոյ մասերը տեղ են գտել այլ ձեռագրերում (հիմնականում տարբեր ժողովածոներում): Մասնաւորապէս, խօսքը ողբերի կամ տաղերի մասին է, որոնց վերաբերող նշումներ են երբեմն հանդիպում «Կտակ շարշարանաց»-ի բնագրի լուսանցքներում (օր.՝ ՄՄ Հ^ր 9301, 11ա, 13բ, 16ա եւ այլուր): Օրինակ, Յակոբ Պատրիարք Նալեանին վերագրուող աւագուրբաթեայ տաղ-ողբեր տեղ են գտել տաղարաններում եւ

¹⁷ «Կտակ տեառն Ղազարու սրբազան կաթողիկոսի Ամենայն Հայոց ասացեալ». ՄՄ 420, 114ա: Այս նախադասութիւնը գրուած է մէկ տողի վրայ, խորագրից աւելի խոշոր բոլորգրով, կարմրով, ուստի չենք բացառում, որ այն աւելացուած լինի յետագայի ձեռնով:

ընկալուել որպէս առանձին տաղեր¹⁸: Այդ ողբերը որոշ ձեռագրերում նաեւ խազագրուած են (օր.՝ ՄՄ Հ^մ 9869, 42ա, 44բ-5բ եւ այլուր):

Բացի այդ, օրինակ, Գէորգ Վրդ. Մխլայիմի տպագիր երկում, որը բովանդակում է նաեւ Ս. Ծննդեան մասին քարոզ ու Ս. Գրիգոր Լուսաւորչի տեսիլքը, վերջում տեղ է գտել «Ողբ Աւագ Ուրբաթու» տաղը¹⁹ (ի տարբերութիւն բուն Աւագ ուրբաթի քարոզի, այն ոչ թէ հայատառ թուրքերէն է, այլ հայերէն):

բ. «Կտակ»-ի միննոյն խմբագրութեան/տարբերակի սկսուածքը կարող է ունենալ տարբերակներ:

Այսպիսի տարբերակները, կարծում ենք՝ հիմնականում գրիչների ընդօրինակման ընթացքում պէտք է որ ի յայտ եկած լինեն: Օրինակ, Ալեքսանտր Ա. Զուղայեցուն եւ Ղազար Ա. Զահկեցուն վերագրուող «Կտակ չարչարանաց»-ի մի խմբագրութեան 13 ընդօրինակութիւններում քարոզը սկսւում է «Կանխաճառութիւնք» (9 ձեռ.)²⁰, «Նախաճառութիւնք» (2 ձեռ.) «Կանխագիտութիւնք» (1 ձեռ.) բառերով, իսկ ձեռագրերից մէկը սկզբից թերի է:

գ. Նոյն սկսուածքով կարող են սկսուել տարբեր հեղինակ-խմբագիրների «Կտակ»-ները:

Թերեւս որպէս «Կտակ»-ների «կանոնական» բնաբան է ընկալուել Պօղոս առաքելի՝ Եբրայեցիներին ուղղուած թղթի Թ. 15-17-ը՝ «Սովորութիւն է մարդկան...», որն էլ ընտրուել է իբրեւ «Կտակ»-ների մեծ մասի բնաբան («տաթեւացիական», «ճաշոցեան», իսկ հեղինակայիններից՝ Ստեփանոս Սրկ. Տփղիսեցու տարբերակների դէպքում): Սակայն Ժէ. դարի հեղինակային տարբերակներում այն միշտ չի պահպանուել, եւ խմբագիր-կազմողներն իրենց ազատ են համարել ընտրելու այլ բնաբաններ՝ ըստ իրենց նախընտրութեան:

դ. Նոյն հեղինակը կարող է ունենալ մէկից անլի «Կտակ»-ի խմբագրութիւն:

Նախորդիւ արդէն յիշատակուեց, որ Ալեքսանտր Ա. Զուղայեցին խմբագրել է «Կտակ չարչարանաց»-ի երկու տարբերակ՝ 1681 եւ առնուազն 1686 թուականներին: Մեր նախնական ենթադրութեամբ, Յակոբ Պատրիարք Նալեանը եւս կարող է մէկից անլի «Կտակ» խմբագրած լինել, սակայն այս ուղղութեամբ աշխատանքը դեռ շարունակուում է:

ե. Անլիմ՝ նոյն հեղինակին կարող են վերագրուած լինել բազմաթիւ «Կտակ»-ներ եւ, ըստ այդմ, տարբեր սկսուածքներով տարբերակներ:

Այս դէպքում ամենայատկանշականը, թերեւս, Յակոբ Պատրիարք Նալեանի օրինակն է, որին, ըստ մեր նախնական տուեալների, ձեռագրերում եւ ձեռագրացուցակներում վերագրուում է առնուազն 6 սկսուածքով աւագուրբաթեայ քարոզ:

Իսկ Ղազար Ա. Զահկեցի հայրապետին, որն, ամենայն հաւանականութեամբ, որեւէ «Կտակ» չի խմբագրել, վերագրուել է «Կտակ չարչարանաց»-ի տարբերակ:

Վերջին երկու առանձնայատկութեամբ թերեւս պէտք է բացատրել այն հանգա-

¹⁸ Գ. Բամպուրճեան, Յակոբ Պատրիարք Նալեան (1706-1764). Կեանք, գործերը եւ աշակերտները, էջ 46-48:

¹⁹ Տե՛ս Գէորգ Մխլայիմ, Ճառ ամենամաքուր Ծննդեան եւ Կտակ Զարչարանաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, Կ. Պոլիս, 1796, էջ 60-62:

²⁰ Մի գրչագրի նկարագրութեան մէջ էլ այն վրիպմամբ «[Կ]անխավաճառութիւնք» է դարձել:

մանքը, որ ամենաշատը հէնց Յակոբ Պատրիարք Նալեանին են վերագրուել այս քարոզի տարբերակներ:

- Նմանատիպ ժանրի միատրոների հետ աշխատելու առանձնայատկությունները, մասնատրապէս՝ բարդությունները:

Վերոբերեալ առանձնայատկութիւններից ակնյայտ է դառնում, որ խնդրոյ առարկայ ժանրի նմոյշ-քարոզները, ի տարբերութիւն միջնադարեան բնագրերի, աւելի ազատ կերպով են ընդօրինակուել: Սրա հետ կապուած՝ կարելի է առանձնացնել եւս մի քանի դիտարկում, որոնք վերաբերում են «Կտակ»-ներ բովանդակող ձեռագրերի նկարագրումանը՝ գործնական կողմին: Առաջին հերթին, խօսքը ձեռագրացուցակներում նման միատրոները փնտռելու բարդութեան մասին է՝ մի քանի պատճառով: Նախ եւ առաջ, միեւնոյն խմբագրութեան՝ տարբեր հեղինակների վերագրուելու հանգամանքով պայմանաւորուած: Բացի այդ, ձեռագրացուցակների ցանկերում դրանք դասակարգելը եւս որոշակի բարդութիւն է ներկայացնում: Օրինակ, այս ժանրի քարոզները Մատենադարանի ընդարձակ ձեռագրացուցակի է. հատորի նիւթերի ցանկում դրուած են ժանրային տարբեր դասակարգման տակ. մի դէպքում՝ «Աստուածաբանական-դաւանաբանական»-ի²¹, միւս դէպքում՝ «Մեկնողական»-ի²², եւ երկու դէպքում էլ դասակարգումը սխալ չէ:

Տպագիր «Կտակ»-ների պակասը եւս դժուարացնում է ժանրի համակողմանի ուսումնասիրութիւնը. ժանրի միատրոների գերակշիռ մեծամասնութիւնը դեռեւս անտիպ է: Տպագրուած են Ճաշոց ծիսամատեանում տեղ գտած «Կտակ շարշարանաց»-ի տարբերակ(ներ)ը, իսկ հեղինակային տարբերակներից (բացի Ս. Գրիգոր Տաթեւացու Քարոզգրքում առկայ տարբերակը) հրատարակուած է օրինակ՝ Գէորգ Մխլայիմ Վարդապետի (1681-1785 թթ.) խմբագրութիւնը, որը մինչեւ 1818 թ. ունեցել է 7 հրատարակութիւն²³: Միւս տպագիր օրինակներն արդէն ժԹ. դարից են:

Վերոթուարկեալից բխում է նաեւ, թէ ինչպիսի բարդութիւններ է ենթադրում «Կտակ շարշարանաց»-ի խմբագրութիւնների համեմատական կամ քննական բնագրերի կազմման աշխատանքը:

Ամփոփում

Այսպիսով, թուարկուած առանձնայատկութիւնները տարբերում են «Կտակ շարշարանաց»-ի նմոյշ-քարոզներն այլ քարոզներից՝ անգամ եթէ ընդգրկուած են եկեղեցական տօնական տարուայ ընդգրկմամբ կազմուած քարոզգրքերում: Սոյն հետազոտութեան աւելի լայն նպատակներից էր կոնկրէտ ժանրի ձեռագրական առանձնայատկութիւնների վերհանման եւ դասակարգման օրինակով ցոյց տալ մի կողմից՝ ուշմիջնադարեան կամ վաղ արդի շրջանի եւ միւս կողմից՝ դրան նախորդող՝ միջնադարեան շրջանի բնագրերի կազմման, խմբագրման, ընդօրինակման եւ այդ ընդօրինակութիւնների «տարածման միջավայրի» տարբերութիւնները: Ակնհերեւ է, որ, ի տարբերութիւն աւելի վաղ շրջանի բնագրերի, որոնք, թերեւս, աւելի «կանոնական» են ընկալուել, ուշ միջնադարում բնագրերն առաւել «ազատ» ընդօրինակման եւ խմբագրման են ենթարկուել: Այս հանգամանքը դժուարացնում է մի կողմից այդ խմբագրութիւնների հեղի-

²¹ Տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. է., խմբ.՝ Գ. Տէր-Վարդանեանի, Երևան, 2012, էջ 1224:

²² Տե՛ս նոյն տեղում, էջ 1228:

²³ Մանրամասները տե՛ս Ա. Տէր-Ստեփանեան, «Գէորգ Մխլայիմ», էջմիածին, 1984, Ե. (Մայիս), էջ 41-42:

նակային պատկանելութեան պարզումը, միւս կողմից՝ այդ տարբերակների քննական կամ համեմատական բնագրերի կազմումը: Մաշտոցեան Մատենդարանի ընդարձակ ձեռագրացուցակների կազմման եւ հրատարակման դեռեւս շարունակուող աշխատանքի առումով, կարծում ենք՝ կայ նաեւ կիրառական կոնկրէտ ասպեկտ՝ ձեռագրական միաւորների նկարագրութեան ճշգրտման իմաստով, ինչին, յուսով ենք՝ կարող է որոշակիօրէն նպաստել նաեւ սոյն աշխատանքը:

ԳԱՌՆԻԿ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Պատ.գիտ.թեկ., Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանի աւագ գիտաշխատող, ԵՊՀ գիտաշխատող, ԳՀՃ դասախօս

